ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Չինար Վահանի Ներսեսյանի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգության բարձրացումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է Ե.23.03 - «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) վերջին տարիների վիճակագրությունը մտահոգիչ է՝ դրանց քանակի ավելացման պատճառով: Հանրապետությունում ձեռնարկված միջոցառումները ՃՏՊ-ների քանակի նվազեցման ուղղությամբ առայժմ ցանկալի արդյունք չի տալիս: Հայտնի է, որ տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունը ապահովվում է «վարորդ – ավտոմոբիլ – ճանապարհ - միջավայր» (ՎԱՃՄ) համակարգում: Համակարգի յուրաքանչյուր բաղադրիչ իր հերթին ունի ենթացուցանիշներ, որոնք ձևավորվում են երթևեկության անվտանգությունը: Հատկանշական է, որ միջպետական ճանապարհներին տեղի ունեցող ՃՏՊ-ների ծանրության աստիճանի գործակիցը առավել բարձր է, քան խոշոր քաղաքներում տեղի ունեցող ՃՏՊ-ների ժամանակ: ՃՏՊ-ների որակական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ դրանց հիմնական պատճառը սահմանված արագության գերազանցումն է: ՀՀ-ում միջպետական ավտոճանապարհները հիմնականում անցնում են բնակավայրերով (փոքր քաղաքներ, ավաններ, գյուղեր), որտեղ դիտվում է բարձր վթարայնության, բնակավայրերում 1 կմ ճանապարհահատվածներում միջինը տեղի է ունեցել 9.6 ՃՏՊ, իսկ ուղեմասերում՝ 4.6 (մոտ 2 անգամ ավելի), որը հաստատում է բնակավայրերում երթևեկության անվտանգության խնդրին ուշադրության արժանացմանը: Բնակավայրերում ավտոմոբիլային ճանապարհների տրանսպորտաշահագործական ցուցանիշների և հատկանիշների հետազոտումը, համակարգումը, երթևեկության համար դժվար տեղամասերի որոշումը և դրա հիման վրա ավտոմոբիլային ճանապարհի մշտադիտարկումը, հետազոտումը կարևոր նշանակություն ունեն ավտոտրանսպորտի երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման գործում:

ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված ատենախոսությունում գիտական դրույթները, եզրակացությունները պարզաբանված են բավականաչափ բարձր մակարդակով, քանի որ դրանք կատարված են հետազոտությունների արդյունքների ընդհանրացման, դրանց վերլուծության և տեսական հետազոտությունների հիման վրա:

Հայցորդի կողմից ատենախոսությունում առաջ քաշված գիտական դրույթների արժանահավատությունը, հիմնավորված է ոչ միայն տեսական հաշվարկներով, այլև բնական, փորձարարական և վերլուծական հետազոտությունների արդյունքներով:

Բնակավայրերում պատահարների հարաբերական քանակը կախված է նրանց երկարությունից: Առավել փոքր բնակավայրերում վարորդները անցնում են առանց արագությունը փոփոխելու, անտեսելով ճանապարհային պայմանների բարդացումները: Առավել մեծ երկարությամբ բնակավայրերում վարորդները արագությունը նվազեցնում են և անցնում են բավականին բարձր զգուշությամբ: Պրակտիկան ցույց է տվել, որ իրար մոտ գտնվող բնակավայրերում, երբ բնակավայրերի միջև՝ ուղեմասում արագության սահմանափակում չի կիրառվում, ապա այդ ուղեմասում զարգացրած բարձր արագությամբ երթևեկող վարորդները մուտք են գործում հաջորդ բնակավայր և հաճախ են առաջացնում ՃՏՊ-ներ (Պռոշյան-Քասախ հատվածի օրինակով՝ Մ1 ճանապարհ):
Հետազոտության արդյունքներով դա բացատրվում է նրանով, որ շատ բնակավայրերում բացակայում են հետիոտնային անցումները, սպասարկման տարբեր ճանապարհամերձ օբյեկտների մոտ բացակայում են ավտոկայանատեղերը: Ավտոմոբիլները ստիպված կանգնում են կողնակի կամ երթևեկելի մասի եզրին, որոնք այնուհետև հոսքի արագությանը ոչ համարժեք՝ ցածր արագությամբ, երբեմն նաև կտրուկ մուտք գործելով երթևեկելի մաս՝ բարդացնում են երթևեկության պայմանները և ստեղծում են վթարային իրավիճակ:

ՃՏՊ-ների վերլուծությունը ցույց է տվել, որ բնակավայրերում առավել հաճախ հանդիպող պատահարներն են՝ տրանսպորտային միջոցների բախումները, հետիոտնի, խոչընդոտի և կանգնած տրանսպորտային միջոցների վրաերթերը:

Հետազոտման հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել բնակավայրերի սահմաններում միջպետական նշանակության ավտոճանապարհներին վթարայնության փոփոխման վարիացիայի օրինաչափությունները, բացահայտել երթևեկության անվտանգության վրա ազդող գործոնները և մշակել անվտանգության բարձրացման գործնական միջոցառումներ:

Նպատակին հասնելու համար առաջադրվում են հետևյալ խնդիրները.

- գնահատել ՀՀ բնակավայրերում ավտոմոբիլային ճանապարհացանցի վիճակը, հետազոտել այդ հատվածներում տրանսպորտային հոսքերի բնութագրերը (երթևեկության արագության ռեժիմները),
- իրականացնել վթարայնության վերլուծություն՝ բնակավայրերի սահմաններում՝ միջպետական նշանակության ճանապարհների վտանգավոր տեղամասերը բացահայտելու համար,
- ուսումնասիրել երթևեկելի մասի վրա կամ կողնակին կանգնած ավտոմոբիլների ազդեցությունը երթևեկության ռեժիմների և անվտանգության վրա,
- հետազոտել բնակավայրերի սահմաններում երթևեկության կազմակերպումը, կահավորվածությունը և ճանապարհային պայմանները,
- մշակել բնակավայրերով անցնող երկգոտի ավտոճանապարհների վրա տրանսպորտային հոսքերի երթևեկության մաթեմատիկական մոդել,
- մշակել գործնական միջոցառումներ բնակավայրերում «սև կետերի» և վթարային տեղամասերի կրճատման ուղղությամբ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԸ

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

- բացահայտվել են ավտոճանապարհների թողունակության վրա բնակավայրերի երկարության ազդեցությունը և տրանսպորտային հոսքերի երթևեկության օրինաչափությունները «անշարժ ավտոմոբիլ - խոչընդոտ»-ի առկայության դեպքում:
- հիմնավորվել են բնակավայրերի հատվածներում վթարայնության հիմնական գործոնների ազդեցությունը և մշակվել են գործնական միջոցառումներ երթևեկության անվտանգության բարձրացման նպատակով:
- մշակվել են բնակավայրերով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհահատվածների համար տրանսպորտային հոսքերի երթևեկության մաթեմատիկական ալգորիթմ, մոդել և ծրագրային ապահովում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ատենախոսությունում կատարված հետազոտություններն գիտական և գործնական կիրառությունների տեսակետից ունեն հետևյալ նշանակությունները.

- մշակվել են գործնական առաջարկություններ՝ բնակավայրերի սահմաններում միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության

անվտանգության և թողունակության բարձրացման համար, որոնք կարող են երաշխավորել տվյալ հատվածներում վթարայնության մակարդակի նվազեցում;

- երթևեկության հավանական օրինաչափությունների մաթեմատիկական մոդելների մշակմամբ որոշվել են տրանսպորտային միջոցների երթևեկության քանակական և որակական բնութագրերը՝ ապահովելով բնակավայրերի սահմաններում արագության օպտիմալ ռեժիմներ և երթևեկության հարմարավետության մակարդակ;
- հետազոտման արդյունքները կարող են օգտագործվել երթևեկության անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող պետական գերատեսչական մարմինների. ճանապարհաշինարարական և շահագործական, նախագծային կազմակերպությունների, պարեկային ոստիկանության կողմից:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաձայնելով ատենախոսության հիմնական դրական արդյունքների հետ, անհրաժեշտ եմ համարում նշել աշխատանքում տեղ գտած թերությունների մասին և ներկայացնել որոշ դիտողություններ.

1. ՃՏՊ-ների կուտակման տեղերում ճանապարհի երկրաչափական պարամետրերից ցանկալի կլինի հետազոտել նաև այդ պարամետրերի որակական հատկանիշները (օրինակ ծածկի կցման գործակիցը և այլն):
2. Բնակավայրերում կատարվել է ՃՏՊ-ներ ընդհանուր վերլուծություն, ցանկալի կլիներ բնակավայրերի սահմաններում և դրանց մոտեցումներում առանձնացվեր տարանցիկ և տեղական երթևեկության ՃՏՊ-ների ցուցանիշները և վերլուծվեր, գուցե այլ օրինաչափություններ բացահայտվեին:
3. 4.1 պարագրաֆում ՃՏՊ-ների վերլուծության համար ներկայացված 4 խմբերի մեջ կարելի էր ավելացնել նաև՝ բնակլիմայական պայմանները:
4. Նկ. 4.2-ում ցույց տրված մուտքի գրպանիկներով նախատեսված երթուղային տրանսպորտի համար չի նշված, որ կանգառի չափը ինչ թողունակություն կապահովի:

Սակայն պետք է նշել, որ բերված դիտողությունները չեն նսեմացնում ներկայացված ատենախոսական աշխատանքի ընդհանուր գիտական դրույթները և կիրառական նշանակությունները, որոնց գնահատականը տրվեց վերևում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չինար Վահանի Ներսեսյանի կողմից ներկայացված ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական աշխատանք և ուղղված է բնակավայրերի սահմաններում և նրանց մոտեցումներում միջպետական նշանակության

ավտոճանապարհների երթևեկության անվտանգության և թողունակության բարձրացման համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտահայտված են հրատարակված 13 գիտական հոդվածներում, ինչպես նաև միջազգային և բուհական գիտաժողովներում ու գիտական սեմինարներում կատարված զեկուցումներում:

Գիտական հրատարակումները և սեղմագիրը լրիվ ամփոփում են ատենախոսության բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, գտնում եմ, որ Չինար Վահանի Ներսեսյանի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգության բարձրացումը» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ՀՀ-ում ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և դրա հեղինակ Չինար Վահանի Ներսեսյանը արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ե.23.03 - «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՃՇՀԱՀ-ի «Ջրային համակարգերի,
հիդրոտեխնիկայի և հիդրոէներգետիկայի»
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. **Մ.Պ.Հակոբյան**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ Մ.Պ.Հակոբյանի ստորագրությունը
ՃՇՀԱՀ գիտական քարտուղար՝ տ.գ.թ., դոցենտ **Լ.Հ. Լևոնյան**

20.08.2026թ.